



ԽՈՐԱՑՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Ռեակտորներում միջուկային վառելիքն ամբողջությամբ չի օգտագործվում: Մնում է որոշակի քանակությամբ ուրան, որը այլևս անպիտան է օգտագործման համար, սակայն պահպանում է իր ռադիոակտիվությունը: Անհրաժեշտություն է առաջանում այն օգտահասնել (ուրիլիզացնել) և, հատուկ անոթներում ամփոփելով, թաղել հողի տակ՝ չաղտոտելու համար շրջակա միջավայրը: **Թափոնների օգտահանման աշխատանքները բավական բարդ են և ծախսատար:** Թափոնների պահեստավորման ինդիքն այսօր առկա է շար երկրներում: Պահեստարանների կառուցման համար մեծ տարածքներ են պահանջվում, ինչն արդեն իսկ պրոբլեմ է փոքր տարածքով երկրների համար:

Միջուկային ռեակտորների աշխատանքում առկա է անսարքությունների դրսևորման որոշակի վրանգ, ինչը կարող է ողեկցվել ռադիոակտիվ գազերի արտահոսքով: 1986 թ. Չերնոբիլյան աղետը, 2011 թ. Ճապոնիայի Ֆուկուսիմա-Դայիթի ատոմակայանի աղետը հիշեցնում են մարդկությանը, որ ատոմային էներգիայի անվտանգ շահագործումը ևս լիարժեքորեն երաշխավորված չէ:

Միջուկային էներգիան օգտագործվում է նաև ռազմական նպատակներով: Վրանգ կա, որ ատոմային ռումբի սրեղծման տեխնոլոգիան կարող է ընկնել տեռորիստական կազմակերպությունների կամ պետությունների ձեռքը: